

Արմեն Դարբինյան.

«Քաղաքին հարկավոր է պահանջատեր ու գրագետ քաղաքացի»

Հայ-ռուսական համալսարանի ռեկտոր Արմեն Դարբինյանը ծնվել է Գյումրիում, անձնագիրը ստացել Երևանում, սովորել Մոսկվայում, գիտակցաբար վերադարձել է հայրենիք ու եղել երկրի վարչապետը: Արմեն Դարբինյանը հիշում է 80-ականների Երևանը, պատժում փրամվայների, Փակ շուկայի դիմացն աշխատող «պեռաշվիանոցի», Հյուսիսային պողոտան կառուցելու որոշման ծախսն, ինչպես նաև պատժում իր՝ Երևանում փոփրիկ կղզի սրեղծած համալսարանի ծախսն:



Մանկության առաջին ու ամենազեղեցիկ հատվածն անցկացրել եմ Գյումրիում: Այն ժամանակ դեռ Լենինական էր կոչվում: Ինձ լենինականցի եմ համարում:

Երևանը նախ սիրում եմ որպես մեր երկրի մայրաքաղաք՝ գլխավոր քաղաք: Երևանին նույնչափ տիրոջ զգացումով եմ վերաբերվում:

1975 թվականին ընտանիքով Երևան տեղափոխվեցինք: Հինգերորդ դասարանում էի: Բնակվում էինք Կոնդուս՝ քաղաքի կենտրոն, բնիկ երևանցիներ: Սովորում էի Շևչենկոյի անվան դպրոցում: Ես իմ լենինականյան ծագումնաբանությամբ, եկա ու անմիջապես հայտնվեցի կոնդեցիների հետաքրքիր մթնոլորտում: Կոնդեցիների շրջապատում այդքան էլ հեշտ չէր գոյատևել ու ապացուցել կյանքի բարգավաճման իրավունքը: Կարծես թե հաջողվեց:

Պե՞տ մինչև Երևան տեղափոխվելը հաճախ էինք գալիս մայրաքաղաք: Գյումրիում ամառներն այսքան շոգ չեն լինում: Փոքր ժամանակ, երբ ամառային արձակուրդներին մեր ազգականների մոտ էինք գալիս, Երևանն ինձ համար աշխարհի ամենաշոգ վայրն էր:

Ի՞նչ պատկերացմամբ Երևանը սկսվում էր Փակ շուկայից, Պատմության թանգարանից ու Կապույտ մզկիթից: Դպրոցական տարիներին, երբ դասերից փախչում էինք, միշտ այնտեղ էինք գնում: Փակ շուկայի դիմացը 8-կուպեկանոց «պեռաշկիներ» էին վաճառում: 10 կուպեկը տալիս էինք՝ մանր չկար: Մեր սերնդից ով ստամոքսային խնդիր ունի, իմացեք, որ հենց այդ կարկանդակների պատճառով է:

Ինձ վրա մեծ տպավորություն էր թողել տրամվայը. այն ինձ համար առանձին մի երևույթ էր: 7 համարի տրամվայ էի նստում Կոմիտասից, որտեղ տուն էինք վարձակալում, ու իջնում էի Պրոսպեկտի շուկա: Սովետական տրամվայներ էին, բայց այսօրվա պես էր. տրանսպորտային հարցը լուծված չէր, ու հատկապես պիկ ժամերին մարդիկ պարզապես կախված էին տեղափոխվում: Հետագայում Արաբկիրի թաղամասում բնակարան ստացանք: Հիշում եմ 24 համարի ավտոբուսը. Ազատության պողոտայից կրկին դեպի Պրոսպեկտի շուկա էր իջնում: Ու կրկին ավտոբուսը բազմամարդ էր, թվում էր, թե Մոնումենտի ճանապարհին չի դիմանա:

Մոնումենտը՝ Հաղթանակի զբոսայգին, ինձ համար շատ կարևոր էր: Այնտեղ ենք կայացել, այնքան կոշիկ ենք արել՝ ծեծել, ծեծվել: Անտառների հատվածը, այգին, լիճը՝ մեծ մասն այսօր չկա: Ցավոք սրտի, այնպիսի տպավորություն է, թե այն ամենը, ինչ սիրել եմ Երևանում, էլ չկա՝ տրամվայը, շուկան, Մոնումենտն ու հարակից անտառը:

Անձնագիրս Երևանում եմ ստացել: Բայց կենսագրությունս այնպես ձևավորվեց, որ Երևանում ընդամենը հինգ տարի ապրեցի: Տասներորդ դասարանն ավարտելուց հետո ընդունվեցի Մոսկվայի պետական համալսարան:

Սովետական տարիներին Գյումրին իր ուրույն տեղն ունեւր, այնտեղից դեպի Մոսկվա ուղիղ չվերթներ կային: Ու Մոսկվայում գյումրեցիների ու երևանցիների առանձին շրջապատներ կային, միմյանց հետ մտերիմ չէին: Ես նրանց կապող օղակն էի:

Մոսկվայում հինգ տարի համալսարանում սովորեցի, հետո երեք տարի ասպիրանտուրայում: Այնուհետև մնացի այնտեղ աշխատելու: 1992 թվականի վերջին վերադարձա Երևան՝ արդեն որպես պետական ծառայող: Բնագրով ու գիտակցական ընտրությամբ վերադարձա արդեն ազատ ու անկախ Հայաստանի մայրաքաղաք: Հենց այդպես էի ուզում տեսնել Երևանը՝ նորաստեղծ պետության մայրաքաղաք:

Կարծում եմ՝ 80-ականների Երևանը շատ ավելի էր բնակավայր հիշեցնում, քան մերօրյա քաղաքը: Կար բակային մշակույթը, միմյանց օգնելու միտումը, իրարից ոչինչ չէինք ուզում թաքցնել, ավելի բաց էինք: Այսօր հարուստների ու աղքատների թաղամասեր կան, ինչն այն

ժամանակ չկար: Բոլորս մի բակում էինք ապրում: Երևանը կլանային սկզբունքների անցավ: Բակային մշակույթը կորցնելով՝ Երևանն ենք կորցնելու, մենք դրա ճանապարհին ենք:

Մեր Հանրապետության հրապարակը ինքնին ձևավորում է մեր տեսադաշտն ու վերաբերմունքը քաղաքի ու երկրի նկատմամբ: Այն մեր երկրի և քաղաքի մասշտաբի ցուցանիշն է: Աշխարհի ամենազարգացած, հայտնի ու հարուստ քաղաքներում, գուցե, նմանօրինակ հրապարակ չտեսնեք՝ լայն ու դրական իմաստով ամբիցիոզ: Հրապարակը տրամադրում ու ծրագրավորում է մեզ լինել հզոր քաղաք ու հզոր երկիր: Այս հրապարակի ստեղծողների գաղափարը հենց սա է՝ նույնիսկ հարյուր տարի անց ստիպել մեզ գիտակցել հզոր երկրի հզոր մայրաքաղաք ունենալու պատասխանատվությունը: Ցավում եմ, որ շատ դեպքերում կորցնում ենք այդ պատասխանատվությունը: Պետական ծառայության ընթացքում փորձել եմ անել ամեն ինչ, որպեսզի դա այդպես լինի:

Հյուսիսային պողոտան կառուցելու որոշումն առաջին անգամ հենց ինձ մոտ է քննարկվել: Այդ ժամանակ երկրի վարչապետն էի: Իմ օրոք է նախագիծը հաստատվել, նախագծի ջատագովներից էի, սակայն բացարձակ այլ լուծումներով: Շատ եմ ցավում, որ Հյուսիսային պողոտան այսօր այս տեսքն ունի՝ նման բանի տակ երբևէ չէի ստորագրի ու չեմ էլ ստորագրել: Հյուսիսային պողոտան նախատեսված էր դառնալու Երևանի սիրտը, արվեստը, շնորհքը, մշակույթը ցուցադրող, առավելագույնը երկհարկանի շենքերով, թանգարաններով, մշակութային փոքրիկ օջախներով մի ձեմուղի: Երբեք չէի մտածում, որ բնակարանային անիմաստ ու տգեղ շինարարություն է իրականացվելու:

Պետական ծառայությունից դուրս գալուց հետո, անցնելով ակադեմիական կյանքի, հայտնվեցի մի տարածքում, որ պետք է նորովի ստեղծվեր ու կառուցվեր՝ ոչ միայն շենքի, շինությունների իմաստով, այլ նաև մթնոլորտի: Համալսարանի տարածքն անսպասարկ էր, հին շինարարական աղբ էր կուտակված, շենքն էլ սարսափելի վիճակում էր: Հիմա, փառք Աստոծ, կարելի է ասել, որ համալսարանը Երևանի ամենախնամված շենքերից է ու գտնվում է ամենականաչ տարածքներից մեկում: Չքաղվում ենք շարունակական շինարարությամբ. հանձնեցինք դպրոցի համար նախատեսված երկու մասնաշենք, սպորտային համալիր, ֆուտբոլի դաշտ, համալսարանի նոր մասնաշենք: Այս ամենն անում ենք բոլոր ամենաբարձր, այդ թվում նաև էկոլոգիական չափանիշներին համապատասխան: Համարում եմ, որ եթե նոր սերունդ ենք կրթում ու պատրաստում, պետք է նրանց լավագույն հնարավորություններն ու տարածքը տանք, որ կարողանան վայելել:

Քաղաքին հարկավոր է պահանջատեր ու գրագետ քաղաքացի, հակառակ դեպքում ունենք այն, ինչ ունենք՝ անտառների ոչնչացում, անսպասարկություն, բարբարոսական վերաբերմունք քաղաքի նկատմամբ: Սիրտս ցավում է այդ ամենի համար, քաղաքով զբոսնելիս այլևս հաճույք չեմ ստանում, արտասահմանցի հյուրերին փորձում եմ միանգամից քաղաքից դուրս տանել՝ բնությունը վայելելու: Պետք է կարողանանք բնությունը հետ բերել Երևան: Նա, ով դա կանի, հերոս կդառնա:

Ցավում եմ, որ մարդկանց հետ անհետանում է քաղաքի ոգին: Ավագ սերունդը մեզ լքում է, նոր սերունդը շատ բան չի տեսել: Բայց այնքան եմ ոգևորվում, օրինակ, երիտասարդների էկոլոգիական շարժումներով՝ բարձրացրած հարցերով, պայքարով, միշտ փորձում եմ սատարել նրանց:

Բնակարանի պատահաններից Մասիան է երևում, համալսարանի պատահաններից՝ Արագածը, երբեմն գրուցում ենք: Ամենալավ օրն է ինձ համար, եթե Մասիան տեսանելի է: Մյուս պատահանից Մատենադարանն է, պատկառանք եմ տածում այդ շինության և դրա առաքելության հանդեպ. մեր ազգի ամենաբարձր արժեքներից է: Մյուսից Մայր Հայաստանն է. կուզենայի, որ մեր երկրին մոր նման վերաբերվեինք: Պիտի գիտակցենք դա. ճառեր ու կենսացներ ասելը հեշտ է, ամենօրյա գործողություններով ապացուցելն ու հենց այդպես ապրելը՝ այլ բան: Հիասքանչ երիտասարդություն ունենք, որ մեզ թույլ չի տալիս հոռետես լինել: